ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N Մհ/173-2021
„30" 06 2021թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <դ> ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 03042019-03-0056 վկայականը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական դպրոցների կանոնադրությունները հաստատելու և Արարատի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 124 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 94 որոշման 1-ին կետով հաստատված <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունում 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Արարատի մարզ, համայնք Մրգավետ, Մաշտոցի փողոց թիվ 27:

2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

Հանձնարարել դպրոցի տնօրենին՝ համապատասխան ռեգիստրում իրականացնել կատարված փոփոխության պետական գրանցումը:

30.06.2021

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ